ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

«ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«27» փետրվարի 2015թ.

0040, Երևան Աճառյան 1
հեռ. (374-60) 691001

## Հարգելի գործընկեր

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/3>> ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնման ընթացակարգի շրջանակներում ՀՀ ԱԻՆ <<Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա>> ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու Գնումների աջակցման կենտրոնի և հնարավոր մասնակիցների միջև կնքված NՇՀԱՊՁԲ-11/3 շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքները:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ԱԻՆ <<Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա>> ՊՈԱԿ՝ ք. Երևան, Աճառյան 1 հասցեով, մինչև 2015թ. մարտի 11, ժամը 10.30 /հեռ. 060-69-10-07/ շահագործման բաժնի պետ՝ Հ. Սարգսյան:

Գնման ընթացակարգի ծածկագիրն է՝ N ՃԿՊԱ-ՇՀԱՊՁԲ-15-11/3-1/01:

Հայտերը կբացվեն ՀՀ ԱԻՆ <<Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա>> ՊՈԱԿ-ի շենքում, ք. Երևան, Աճառյան 1 հասցեով, 2015թ. մարտի 11, ժամը 10.30:

Հայտի բնօրինակը և պատճենները /2 օրինակ/ ներառում են գնման ընթացակրգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել <<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/3>> ըմթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացվում է կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Եթե, հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, ՀՀ նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը ՝ մինչև կարգի 110-րդ կետի 7-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

-նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,

-նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքված մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն, որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթեր և/կամ տվյալները:

Հարգանքով՝

Գնահատող հանձնաժողով